



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 21.04.16 թ.  
Ելք № 020

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

պրն. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

պրն. Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ

Հարկային մարմնի կողմից իրականացվող բարեփոխումները նպատակային դարձնելու նպատակով կից ներկայացվում է կոնկրետ հարկ վճարողի կողմից ներկայացված առաջարկություն:

Խնդրում ենք քննության առնել և ներկայացնել հարցի վերաբերյալ հարկային մարմնի դիրքորոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

Համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի ( Ցողովածի կետ 6. 2-րդ պարբերություն) ՀՀ կառավարությանն անընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013թ. հունվարի 11-ի N10-Ն հրամանով հաստատված ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԶԵՂՉԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ներկայացնելու կարգի՝ տվյալ հայտարարությունը պետք է ներկայացնել առևտրային զեղչերի կիրառման օրվան նախորդող առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Սա շատ լուրջ խոչընդոտ է հանդիսանում կազմակերպության համար և գործող տնտեսության պայմաններում մարկետինգային տեսանկյունից առաջացնում դժվարություններ ընկերության առևտրի կազմակերպման համար՝ ստիպելով տնտեսվարող սուբյեկտին իր առևտրի խթանման համար օր առաջ նախատեսված զեղչային ակցիան իրականացնել այս գրաֆիկով, օրինակ՝ եթե աշխատանքային շաբաթվա վերջում /օր. ուրբաթ օրը/ վերլուծելով առևտրի ծավալները՝ ցանկանում ես երկուշաբթի օրը կիրառել նոր զեղչային առաջարկ՝ համաձայն սույն կարգի՝ ստիպված ես այդ ակցիան կիրառել առնվազն 5 օր հետո՝ հաշվի առնելով որ 2 ոչ աշխատանքային օր է առջևում + 2 աշխ. օրը կարգով նախատեսված, ուստի զեղչը կարող ես կիրառել ամենաշուտը չորեքշաբթի : Համաձայնեք, որ սա ուղակի անիմաստ է, ու հաշվի առնելով, որ այն ՀՏ ներկայացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով, կարող է ներկայացվել օրինակ հենց նախորդ օրը: Կարծում եմ հայրենի հարկային տեսչությունը սրանից ոչ մի վնաս չի կրի՝ փոխարենը օգնած կլինի տնտեսվարողին՝ ավելացնել առևտրաշրջանառությունը, որից ուղակիորեն կապված է հարկերի վճարումը: Խնդրում եմ արձագանքել և ձեռնարկել միջոցներ՝ փոփոխելու այս կարգը: Շնորհակալություն ! Հ.Գ՝ իսկ հաջորդիվ նաև լուծել այդ տեղեկանքը ներկայացնելը ավտոմատացնելու մասին խնդիրը, ի վերջո 21-րդ դարն է: